Միջոցառման նկարագրություն

Community Coffee Run

Անցկացման ամսաթիվ՝ 2026թ. օգոստոսի 16
Վայրը՝ Ծառլ Ազնավուրի հրապարակ, ք. Երևան

Միջոցառման ձևաչափը՝ սիրողական քաղաքային 5 կմ վազք՝ հաղթողների որոշմամբ և մրցանակաբաշխությամբ:

Կազմակերպիչներ

KAP Community
Egopile Space
MIJ Coffee Shop
ARAX Lemonades
Red Bull
և այլ գործընկերներ

Միջոցառման նպատակը

Community Coffee Run-ը բաց, սիրողական վազք է, որի նպատակն է խթանել առողջ ապրելակերպը, նպաստել քաղաքային համայնքի զարգացմանը, տարածել սիրողական վազքի մշակույթը և ստեղծել հարթակ քաղաքի բնակիչների ու հյուրերի շփման և նոր ծանոթությունների համար:

Միջոցառումը միավորում է սպորտը, տեղական բիզնեսներին, սուրճի մշակույթն ու քաղաքային համայնքները՝ ստեղծելով անվտանգ, հարմարավետ և հաճելի միջավայր թե՛ մասնակիցների, թե՛ հանդիսատեսի համար:

———

Միջոցառման ծրագիր

07:30 — Կազմակերպիչների և գործընկերների ժամանում:

08:00 — Մեկնարկային գոտու բացում:

Կատարվում են վերջնական տեխնիկական լուծումները, ստուգվում է ձայնային համակարգը, պատրաստվում է մասնակիցների գրանցման գոտին, **MIJ Coffee Shop**-ի սուրճի, **ARAX Lemonades**-ի ըմպելիքների գոտիները, ինչպես նաև վերջնական ստուգվում է երթուղին և կամավորների տեղաբաշխումը:

08:30 — Թիմի նախապատրաստական զրույց:

Տրվում են հրահանգավորումներ կամավորներին, երթուղու պատասխանատուներին, ոստիկանության աշխատակիցներին, բուժանձնակազմին, լուսանկարահանող և տեսանկարահանող թիմին, ինչպես նաև միջոցառման վարողին:

09:00 — Մասնակիցների գրանցման և մեկնարկային փաթեթների տրամադրման սկիզբ:

Մեկնարկային փաթեթը ներառում է՝

• մեկնարկային համար,
• թևկապ,
• երթուղու վերաբերյալ տեղեկատվություն,
• գործընկերների նվերներ (առկայության դեպքում):

09:30 — Գործընկերների գոտիների բացում:

Սկսում են գործել՝

MIJ Coffee Shop-ը,
ARAX Lemonades-ը,
լուսանկարման գոտին,

երաժշտական ծրագիրը (DJ):

09:40 — Մասնակիցների գրանցման ավարտ:

09:45 — Ընդհանուր նախավարժանք՝ **Eleven Fitness** ֆիթնես ակումբի կողմից:

09:55 — Միջոցառման պաշտոնական բացում:

Կազմակերպիչների ողջույնի խոսք, շնորհակալություն գործընկերներին և Երևանի քաղաքապետարանին, անվտանգության կանոնների համառոտ ներկայացում:

09:58 — Հայաստանի Հանրապետության պետական օրհներգի հնչեցում:

10:00 — 5 կմ վազքի մեկնարկ:

Վազքի ընթացքում նախատեսվում է՝

• երաժշտական ուղեկցություն,
• միջոցառման վարողի խոսք,
• լուսանկարահանում և տեսանկարահանում,
• գործընկերների գոտիների աշխատանք,
• MIJ Coffee Shop-ի գոտու աշխատանք,
• ARAX Lemonades-ի գոտու աշխատանք,
• առաջին՝ 5կմ վազքն ավարտող մասնակիցների դիմավորում:

10:18–10:20 (մոտավոր) — Առաջին մասնակցի վազքի ավարտ:

10:30 — Մրցանակաբաշխություն:

Բացարձակ հաշվարկում առաջին երեք տեղերը զբաղեցրած մասնակիցների պարգևատրում, նկարահանում և շնորհակալական խոսք գործընկերներին:

10:40 — Coffee Social:

Մասնակիցների ոչ պաշտոնական շփում, սուրճ՝ **MIJ Coffee Shop**-ից, զովացուցիչ ըմպելիքներ՝ **ARAX Lemonades**-ից, ֆոտոշարք, մասնակիցների հարցազրույցներ և նետվորքինգ:

11:00 — Միջոցառման պաշտոնական փակում:

Շնորհակալական խոսք մասնակիցներին, հաջորդ **Community Coffee Run**-ի հայտարարություն և ընդհանուր լուսանկար:

11:15 — Տարածքի ապամոնտաժում:

———

Անվտանգության ապահովում

Միջոցառման ընթացքում տարածքում կգտնվեն կազմակերպիչները, կամավորները, երթուին վերահսկող ոստիկանության աշխատակիցները և բուժանձնակազմը:

Մինչ մեկնարկը բոլոր մասնակիցները կստանան անվտանգության կանոնների վերաբերյալ հրահանգավորում: Երթուղին նախապես կստուգվի կազմակերպիչների կողմից, իսկ առանցքային հատվածներում կտեղակայվեն կամավորներ և ոստիկանության աշխատակիցներ, ովքեր կուղեկցեն մասնակիցներին և կհետևեն անվտանգ տեղաշարժին:

———

Նախատեսվող մասնակիցների թիվը

Վազքին նախատեսվում է շուրջ **100 և ավել մասնակից**:

Լրացուցիչ տեղեկատվություն

Միջոցառումը կրում է սիրողական և ոչ առևտրային բնույթ և նպատակ ունի նպաստել սպորտային մշակույթի զարգացմանը, առողջ և ակտիվ ապրելակերպի տարածմանը, ինչպես նաև քաղաքային համայնքի համախմբմանը:

Վազքի ավարտից հետո մասնակիցների և հյուրերի համար կգործի հանգստի և շփման բաց գոտի, որտեղ նրանք կկարողանան վայելել սուրճ, զովացուցիչ ըմպելիքներ և շարունակել շփումը ոչ պաշտոնական միջավայրում:

Երթուղու նկարագրություն

Միջոցառման մեկնարկն ու ավարտը լինելու են **Շառլ Ազնավուրի հրապարակում**:

Մեկնարկից հետո մասնակիցները կշարժվեն քաղաքի կենտրոնական փողոցներով դեպի **Մեսրոպ Մաշտոցի պողոտա**, այնուհետև երթուղին կանցնի **Իտալիայի փողոցով**՝ հասնելով **Հրազդան գետի** ափամերձ հատված:

Ափամերձ հատվածում մասնակիցները կկատարեն շրջադարձ և կվերադառնան քաղաքի կենտրոնական մաս: Այնուհետև երթուղին կանցնի **«Զորավար Անդրանիկ»** մետրոյի կայարանին հարակից թաղամասով, որից հետո մասնակիցները կրկին դուրս կգան **Իտալիայի փողոց** և կշարունակեն շարժվել դեպի **Շառլ Ազնավուրի հրապարակ**, որտեղ էլ կավարտվի վազքը: